# ՉՈՐՍ ԵՐԳ

## ԱՇԽԱՏԱՍԻՐԵՑ ԱՇԼՂ. ՉԻՒԱՆԻՆ

ՀՐԱՏԱՐԱԿԵՑ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿԱՊԼԱՆԵԱՆ

Թիֆլիզ 1890.

1941

## ՀԱՅՐ ԱԼԻՇԱՆԻ ՄԱՍԻՆ

—

Յիսուն տարի ծառայել է հայ ազգին,
Անյոգի քաջի նման հայր Ալիշանը,
Նուիրել է Հայոց պատուը գրչին,
Բանաստեղծ, պատմաբան հայր Ալիշանը։
Արժէ որ նա ունի այդքան մեծ համբաւ,
Հայոց լեզուին հագցրել է նոր հագուստ,
Դարուս քերթողահայր Մոսէսն է իրաւ
Յարգելի գիտնական հայր Ալիշանը։
Գրականութեան մէջ մի մեծ հսկայ է,
Ողջ ազգից յարգուած մէկ արեգակ է,
Ծիսական կաթոլիկ է, բայց հոգով հայ է,
Սիրում է Հայաստան հայր Ալիշանը։
Եւրոպայի մէջը մեծ պարծանքն է մեր,
Թողել է հայ ազգին զանազան երկեր,
Գրել է «Այրարատ», «Շիրակ» այլ գրքեր
Եւ գրել է «Սիսուան» հայր Ալիշանը։

ՁՈՒՆԴԱՍ..... ԴԱՐԱՆ
ԱՌԱԳԵՄԻՍՏ

Անկեղծ հայրենասէր, ժրաջան, արի,
Լաւ ծնողաց զաւակ ծնունդը բարի,
Մաղթենք եւ ապրի մի քանի տարի
Թողնի մի այլ նշան հայր Ալիշանը։
Նրա մեծ խելքից օգտուիր Ջիւանի,
Կենսատու գրքերից բազմակողմանի
Սիւնեաց պատմութիւնն էլ գրէր երանի
Զմտած գերեզման հայր Ալիշանը։

Թիֆլիս. 1890 Թ. 13-ն Մայիսի.

---

# ՀԱՅՐ ԱՂԷՔՍԱՆԴՐ ԱՐԱՐԱՏԵԱՆԻ

## ՄԱՀՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ։

—

Հայ կաթոլիկ համայնքից պակասեց մի փայլունակ,
Հայասէր եւ բարեպաշտ քաջ բանաստեղծ-հեղինակ,
Աղէքսանդր վարդապետ բուն Արարատեան զաւակ
Այսպիսի ազգանունով ստացել էր նա հռչակ,
Դաժան մահը մեզանից խլեց մի այր ընդունակ,
Որ չըկայ փոխարինող այժմ նրան նմանակ։
Ինչպէս որ ջերմեռանդ էր նա կաթոլիկութեան շահին,
Այնպէս էլ սուրբ էր նրա գաղափարը ազգային,
Հայոց լեզուին քաջ ծանօթ, բարին ցանկացող հային,
Ազգատեաց եղուիտներին նման չէր բոլորովին,
Ընկճուիլ չէր իմանում նրա աղնիւ վեհ հոգին
Իւր կրօնակիցներից կային նրան հակառակ։
Ինչ որ անցնում էր ձեռը նա տալիս էր աղքատաց,
Երբեմն պատահում էր, որ չէր ունենար չոր հաց,
Նրան շատ յարգում էին ողջ մարդիկը բանիմաց,
Ինքը վարվող խելացի, հեռատես շրջահայեաց,

Առատասիրտ, գթայոյզ, խեղճի համար ձեռքը բաց,
Նա պճնուիլ չըգիտէր հագնում էր շատ հասարակ։
Պատկառելի դիրք ունէր այդ ծերունի աբեղան,
Երբ մահացաւ կըլինէր եօթանասուն տարեկան,
Նա պահում էր մի համեստ հոգեւոր ուսումնարան,
Բազում քահանայներ այդ դպրոցից դուրս եկան,
Ախլցխայ, Ախլքալաք, Լոռի եւ Շիրակաւան,
Հանգուցեալն էր կաթոլիկ Հայերուն վառ աշտանակ։
Իւր ժողովուրդի համար նա ահագին բան թողեց,
Պարապատամեծ գեղին, այգի, բուրաստան թողեց,
Հոյակապ եկեղեցի փառաւոր նշան թողեց
Բարեպաշտ որտերու մէջ կենդանի արձան թողեց,
Իւր տեղը թափուր մնաց գործերը խափան թողեց,
Այնպիսի գործունեայ մարդ դեռ ուշ կըծնի Շիրակ։
Ցիւանի, օրհասական կեանք խլող հրեշտակը
Տապալեց մի կաղնի ծառ դրեց սեւ հողի տակը,
Անթերի է կատարում բարի մարդկանց կոտակը,
Օրհնուած է արդարոց անմոռաց յիշատակը.
Անդադար հարուածելով դաժան մահի գնդակը,
Հայ կաթոլիկ ամբոցից տապալեց մի աշտարակ։

Աղէքսանդրապոլ. 1888 թ. 29-ն Մայիսի։

---

## ՊԱՆԴՈՒԽՏ ԵՂԲԱՅՐ։

—

Պանդուխտ եղբայր քաշուիր գնա երկիրդ,
Քանի որ չես եղել անպատիւ այստեղ,
Լաւ համարէ գարի հացդ ու պանիրդ,
Այն էլ ձեռք չես բերիլ դու լրիւ այստեղ։

Պանդուխտները՝ էլ դեր խաղալ չեն կարող,
Տեղացոց հետ մրցել, տոկալ չեն կարող,
Ընկել մնացել են, դառնալ չեն կարող,
Լի են քեզի պէսներ շատ անթիւ այստեղ։
Դարձիր տունդ բաղդը վերադ բարկացաւ,
Սիրտդ մաշուեց, հոգիդ արդէն տաղտկացաւ,
Օտար երկրում առուտուրդ վերջացաւ,
Այլ ես մի փնտռիլ դու հաշիւ այստեղ։
Երկրիդ մէջ գուցէ անյաղթ Սամփսոն ես,
Խելքով Արիստոտէլ կամ Պղատոն ես,
Եռին մարդն ես, եթէ բաղդ կ'որոնես,
Թէկուզ եղիր իշխան կամ ազնիւ այստեղ։
Տեսնում է Զիւանը բաղդ չունիս բանուկ,
Օտարութեան մէջը աստղդ չէ կտրուկ,
Փոքրանալով շուտ կըլինիս ճնճղուկ,
Իսկապէս էլ լինիս դու արծիւ այստեղ։

1890 թ.

---

## Էրզրումի Կիսկիմ գաւառի Խոտրջուր աւանում պատահած մի անց.ք։

—

### ՆՈՒԷՐ Պ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿԱՊԼԱՆԵԱՆԻՆ։

—

Հազար ութը հարիւր ութսուն վեց թուին,
Յունիսի երեքին գիշեր ժամանակ
Ասին պաշարել են Մոխուրկուտ գիւղին,
Խոտրջրում բարձրացաւ մի աղաղակ։

Խղճուկ ժողովուրդը վայ տէր է կանչում,
Բայի Աստուած, ջոկ տէր ում է ճանաչում,
Երկու հազար ռուբլի փող են պահանջում
Այնտեղ գալով տասերկու թուրք աւազակ։

Խորջրում ազամարդիք շատ քիչ կան,
Մեծ մասը մաշուում են մէջն օտարութեան,
Անտէր թողած կին, եւ զաւակ, օթեւան,
Դառն պանդխտութեան եղել են ճարակ։

Այնպէս որ տան գլուխ մէկ ազամարդ կայ,
Այնտեղ եղողներն են կին եւ երեխայ,
Կան մի քանի հատ էլ գալիր, քահանայ
Չեն կարող գիւղից դուրս՝ մանգալ համարձակ։

Բայց կար այդտեղ մի հազուագիւտ ազամարդ
Քերոբէ անունով քաջ երիտասարդ,
Բան՝ հինգ տարեկան առոյգ եւ զուարթ,
Ժողովուրդի մէջը ունէր մեծ հռչակ։

Յիշեալ քաջը երբ խմացաւ ամէն բան
Պատրաստուեց,—ձեռքն առաւ զէնք ու հրացան
Ասաւ. «գնանք մեր եղբարցը օգնութեան,
Չտանք աւազակաց խմբին մի ստակ։»

Լուսուն երկու ժամ կար, լուր հասաւ տխուր,
Թէ աւազակները կուգան Խորջուր,
Տէր Սէրոբը եղբոր մէջքին կապեց սուր,
Ասաւ. «գնա կռուիր քաջ հայի զաւակ»։

«Թող քեզ օգնէ Քրիստոսի բերանը,
«Սուրբ խաչը միշտ լինի քու պահապանը,
«Բաղուկներուդ ոյժ տայ անմահ Վարդանը,
«Ցրուես ու կործանես խումբը եղուզակ։»

Քաջ Քերոբէն ուրախացաւ, սիրտառաւ,
Տէրտէրի խօսքերը նրան կեանք տուաւ,

Համբուրեց տէր եղբօր ձեռքը հեռացաւ,
Տէրտէրը աչքերից թափում էր կայլակ։
Կանչեց իւր կնոջը ասաւ. «Սիրելի,
«Եթէ մեռնիմ, մի արտասուի, մի տխրի...»
Կարծես ստացել էր երկնային հոգի,
Երեսը փայլում էր, որպէս արեգակ։
Խեղճ մանկամարդ կինը ասաւ. «Սիրակա՛ն,
«Մի գնալ, մի թողնիլ ինձ առանց պաշտպան,
«Աստուած ոչ անէ, որ ենթարկուիս մահուան,
«Ո՞ւմով մխիթարուիմ չունիս յիշատակ։
Եկաւ տէր Անտոնը, հայրը Քէրոբէն,
Մայրը, երէցկինը վազեց ընդ նմին,
Երկու ծերունին էլ ողբով լալագին
Ասին... ո՞ւր ես գնում սիրելի որդեակ։»
Սառնասիրտ Քէրոբէն ընկաւ ճանապարհ,
Թողեց թշուառ կինը խեղճ, անմխիթար,
Համբուրեց ծնողաց ձեռքերը արդար,
Առաւ նրանց օրհնութիւնը սուրբ, իստակ։
Բարձրահասակ գեղատիպար Քէրոբէն,
Առաքինութեան սիրահար Քէրոբէն,
Հագած կապած զէնք ու ասպար Քէրոբէն
Գնում էր առնելու երկնային պսակ։
Իւր դրացիներից դեռ չեկած ոչով,
Քերոբէն գնում էր միտքը անխռով,
Մինչեւ կէս ժամ գնաց անհոգ, ապահով,
Նա պատահեց թշնամեացը միայնակ։
Խնդաձորից երբ որ միջին թաղն հասաւ,
Այդտեղում սրտակից երկու մարդ գտաւ,
Աւետիս եւ Յարութիւնը յետն առաւ,
Դարձաւ կրկին աւազակաց աջողակ։

Աւետիս եւ Յարութիւնը Սապոնջեանց
Գրգիռ տուին Քէրոբէին չափազանց,
Երկու ոտիք երբ հանդիպեցին միմեանց,
Սկսեցին պարպել մէկ մէկու գնդակ։

Ձորոյք ասուած տեղում երբ գտան իրար,
Երկու խումբ քաջերը կռուեցին երկար,
Գցում էին իրար վերայ անդադար
Կարկտի պէս գնդակները շարունակ։

Ձորոյքից վայր իջան հարթ դաշտի վերայ
Ձորի մէջը կանաչ արտերում նոքա,
Իսլամացած մի խումբ Լազեր անդգայ
Քրիստոնեայ Հայոց դարձել են նիրհակ։

Քէրոբէի ընկերի մէկը փախաւ,
Մէկն էլ կռուի մէջը յանկարծ բռնուաւ,
Երբէք փախչելու տեղիք չըտուաւ,
Քէրոբէն դարձել էր մի բուռն կրակ։

Այս անգամ Քէրոբէն մեծ հարուած տուեց,
Նրանց գլխաւորին գնդակը ուղղեց,
Աւազակաց խմբապետին սպանեց
Թոյլ օղլի Տուրսունն էր եղաւ շանսատակ։

Երկու հայ գերի կար Քէրոբն արաւ ջանք
Ազատեց իսկ նրաց, նորից տուեց կեանք,
Հարիւր հիսուն ոսկի կ'ուզէին փրկանք,
Ձատացան մի կոպէկ եղան խայտառակ։

Աւազակաց խումբը կատաղեց կրկին
Սկսան արձակել խմբով միասին,
Միայնակ Քէրոբէն նայում էր չորս դին,
Օգնութիւն էր կանչում չկար օժանդակ,

Հետզհետէ ծեգը բացւում էր արդէն,
Լոյսն էր տիրում մութ գիշերի փոխարէն

Վանդակում բռնուեց քաջ անյախթ բազէն,
Պաշարեցին մի քանի հատ կաչաղակ։
Խղճուկ Քէրոբէի վատացաւ բանը,
Դէպի ձախը թեքուեց բաղդի շրջանը.
Եթէ չտրաքուէր իր հրացանը
Կենդանի չեր մնալ մի հատ հրոսակ։
Քէրոբէն չդարձաւ կրկին դէպի տուն,
Թշնամիքը մահացրին խղճալուն։
Մեռաւ մարդու նման թողեց քաջանուն,
Բարի գործի համար դարձաւ նահատակ։
Թէ Քէրոբէն զոհեց իւր անոյշ կեանքը,
Վտանգից ազատեց բոլոր համայնքը,
Չկատարուեց աւազակաց բաղձանքը,
Իրանց մեծին տուրը տուին հակառակ։
Խոտրջրում Քէրոբի մահն իմացան,
Դրացի ազգականք թափուեցին եկան
Շատ փառաւոր կէրպով դրին գերեզման,
Հոգին թռաւ երկինք որպէս հրեշտակ։
Քէրոբի կորուստը մեծ էր ոգացին,
Բոլոր ժողովուրդը ողբացին, լացին,
Շատ ժամանակ քաջի համար սգացին,
Թէ իշխան, թէ քահանայ, թէ հասարակ։
Զիւան, Քէրոբէի անվեհեր հոգին,
Քաջութիւն սերմանեց մէջը ամբոխին,
Իր մահովը կսկից տուեց ամենին,
Եղաւ ժողովուրդին հաստատ օրինակ։

—

Թիֆլիս. 1890 Թ. 11 Յունիսի.

Дозволено Цензурою, 14 Іюня 1890 г. г. Тифлисъ,
Тип. М. Вартанянца, Тройц. пер. д. № 11.

ՀՈՒՆԳԱՐՅԱՆ ... ԴԱՐԱՆ
Ա՛ԱԴԵՄԻՈՅԻ

[204]

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0415109

2ति
1044